№ 41 Մարտի 6 (18) 1881 Մարտի 6 (18) № 41

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլ, կէս տարվանը 6 բուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում դրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Ոտարարարարացիր գիրում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար գնում են
իրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ժանտախտի երեւալը։—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Ախալցխայից։ Նամակ Երեւանից։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Թիւրքիա։ Գերմանական սոցիալ-դէմոկրատները Ամերիկայում։ Արտաքին լուրեր։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Դաւիթ բէկ։

ԺԱՆՏԱԽՏԻ ԵՐԵՒԱԼԸ

—

Այս օրերս հեռագիրը մեզ լուր բերեց, որ Միջագետքում յայտնվեցաւ ժանտախտ։ Նախ հեռագիրը հաղորդեց մեզ որ Թիւրքաց կառավարութիւնը արդէն գործ է դնում զգուշացնող միջոցներ յայտնված տարափոխիկ սարսափելի ախտի դէմ առաջն առնելու համար։ Հեռագրի մէջ ասված էր, որ Թիւրքաց կառավարութիւնը հրամայել է զօրքով շրջապատել վարակված տեղերը և այրել գիւղերն ու քաղաքները, որտեղ յայտնվել է ժանտախտը։ Երկրորդ հեռագիրը հաղորդեց մեզ, որ Միջագետքում յայտնված ժանտախտը ամենասարսափելի տեսակներին է պատկանում։

Եթէ միայն Թիւրքաց կառավարութեան վրա պէտք է մեր բոլոր յոյսը դնենք,—հազիւ թէ ճշմարիտ կարելի է վստահ լինել որ գործ կը դրվեն դրական միջոցներ ժանտախտի տարածման առաջն առնելու համար։ Միակ մխիթարութիւնն այն է, որ այս տեսակ դիպուածներում անշուշտ կը կազմվի միջազգային առողջապահական մի յանձնաժողով, որ և կուղարկի իր ներկայացուցիչներին այն երկիրները, որտեղ յայտնվել է ախտը։ Բայց մինչև այժմ չենք լսում որ այդ տեսակ միջազգային յանձնաժողով ուղարկված լինէր դէպի Միջագետք։

Ինչպէս յայտնի է Միջագետքը գտնվում է Թիւրքաց Հայաստանից դէպի հարաւ և եթէ զգուշացնող միջոցներ գործ չը դրվեն, ախտը շատ հեշտութեամբ կարող է անցնել Թիւրքաց Հայաստանը, իսկ այնտեղից տարածվել Անդրկովկասում, եւրոպական Ռուսաստանում և այնուհետև արևմտեան Եւրոպայում։

Բայց մինչև այժմ չենք լսում թէ մեր Կովկասեան քաղաքական ու բժշկական վարչութիւնները որ և է միջոց առաջարկած և գործադրած լինէին մեր երկրի սահմանները տարսափելի հիւրի դէմ պաշտպանելու համար։

Ինչ և իցէ, ցանկալի է, որ պետութիւնները նոյնքան ուշադրութիւն դարձնէին սպառնող վտանգի վրա, որքան ուշադրութիւն դարձրին երբ երկու տարի սրանից առաջ վարակիչ ցաւը յայտնվեցաւ Վէտլիանկայում։

Այն ժամանակ չափից դուրս աղմուկ գցեցին,—թէև աղմուկը այդ տեսակ դիպուածներում միշտ աւելի լաւ է, քան թէ կատարեալ լռութիւնը,— իսկ այժմ յայտնի չէ, թէ ինչ պատճառով ամենքը անտարբերութեամբ են վերաբերվում դէպի նոյնանման սպառնալի երևոյթը։

Մի՞թէ կարծում են, որ Միջագետքից ժանտախտը նոյնքան հեշտութեամբ և արագութեամբ չէ կարող անցնել Ռուսաստանն ու արևմտեան Եւրոպա, որքան հեշտութեամբ նոյն ախտը Վէտլիանկայից կարող էր անցնել։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՑԽԱՑԻՑ

—

Փետրվարի 27-ին

Պարոնայք՝ Ալանեան Մարտիրոս, Ավիսանեան Մկրտիչ, Բոզոյեանց Բագրատ, Գալամքարեանց Գրիգոր, Յարութիւնեանց Յարութիւն, Յարոյեանց Սարգիս, Պասուղեանց Գրիգոր, Սաղաթելեանց Եղիշէ, Վարդանեանց Գրիգոր և Վանցեանց Յովհաննէս քաղաքիս Օղեստա կոչված հիւրանոցում փետրվարի 20-ին, իշխանութեան թոյլատրութեամբ, մի ընտանեկան պարահանդէս էին նշանակել Ցանկահայաստանի մեր սովեալ եղբարց օգտին համար։—Հայ, վրացի և ռուս բազմաթիւ ընտանիքներ իրանց այցելութեամբ պատուեցին այդ երեկոն։ Ժամանակը շատ ուրախ և զուարճալի կերպով անցկացաւ, որովհետև իրաքանչիւր ազգութեանը պատկանող անձն այնտեղ գտնում էր իր ճաշակին յարմար և իրեն սիրելի թէ նուագածութիւն, թէ երգ և թէ պար։—Պարահանդէսի սկզբից մինչև վերջը վերոյիշեալ պարոնները, իրաքանչիւրը իրան յատկացեալ գործումը, ծառայութիւն էր անում յարգելի հիւրերին։—Հինգ հայ տիկնայք հերթով բուֆէան էին կառավարում գնդապետկով, որից քարշ էին ընկած լեզկու խէնջարը, վառօդի և գնտակի ամաններ, և իւզով լցրած, երկաթի մի տուփ զէնքեր օծելու համար։ Մուշտակի լերկ սեկը ծառայում էր որպէս երես, իսկ մաղոտ կողմը որպէս աստառ։ Լայն շալվարը պատրաստված էր տեղային կոշտ չուխայից, որի ստորին մասը, ծնկներից ցած, հաւաքված էր կաշուց կարած զանկալների մէջ։ Գետոյ մերկ, առանց գուլբայի ոտների վրա կապել էր տրեխները։

Հայրենիքից բերած իր բոլոր հարստութիւնը—ձին, հագուստը, փողերը—ծախսելէն յետոյ, նա կարողացաւ պահել զէնքերը միայն։ Ներքինապետի թանդագին ընծան, Միւնեաց աշխարհի մի հզօր թագաւորի թուրը, նա խնամքով փաթաթելով, պահ էր տուել իր նոր խնամակալի՝ Սիկօի տանը։ Նրան չէր գործածում, իսկ մնացածը՝ հրացանը, ատրճանակները և խէնջարը գործ էր ածում։ Աւազակների բազմութիւնը ստիպ էր տուել հովիւներին ցուցի հետ կրել և հրացան, իսկ մախաղի հետ գնտակի ու վառօդի ամաններ։

Ցաճախ կրկնվող գողութիւնները պատճառ էին տալիս պատանի Դաւթին անդադար կռուել վտանգների դէմ։ Նա գործ ունէր բացի ուսականներից և գաղանների հետ։ Լեռները, անտառները լիքն էին գայլերով, արջերով և վագրներով, իսկ գրանցից աւելի վատթար էին վայրենի օսերը, իմերելները, խեվսուրները և կովկասեան լեռների բազմաթիւ, խառնիճաղանճ ցեղերը։ Ամենի դէմ պէտք էր պահպանել հօտը, ամենի հետ պէտք էր կռուել—Ահա այդ սրի, տասերկու բիեալ փող, մի չալիկ, մի ոտաշոր, երկու զոյգ տրեխներ, մի խօսքով մօտաւորապէս նոյնքան, որքան ստանում էր մի գնդապետ։ Այդ նախանձելի ռօճիկը տալիս էին Սիկօի տանը և նրա ընտանիքը կերակրվում էր։ Իսկ պատանի Դաւիթը, մեծ պարոնի մեծ հովուի օգնականը, ռօճիկ չէր ստանում. դրա համար պէտք էր դեռ երկար ծառայութիւն։ Նա ստանում էր ամեն առաւօտ միայն օրական հաց, որը իր մախաղի մէջ դրած, տանում էր հետը, բայի դրանից, ստանում էր ամեն տարի մի ձեռք հագուստ։

Այնուամենայնիւ, նա շատ գոհ էր իր նոր վիճակով։ Լեռնային օդը, արձակ կեանքը նրա վրա խիստ բարերար ազդեցութիւն գործեցին։ Եղանակի խստութիւնից կոշտացած և արևից այրված նրա դէմքը, թէև այժմ կորցրել էր իր նախկին քնքշութիւնը, բայց աւելի այրական կերպարանք էր ստացել, որ արտայայտում էր երկաթի առողջութիւն և մարմնի անհամեմատ զօրութիւն։ Նրան այժմ դժուար էր ճանաչել իր հովուական նոր հագուստի մէջ, որ ոչքից մինչև գլուխ բաղկացած էր անասունների կամ մորթից կամ կաշուց։ Գլխին դրած ունէր մուրգուզ *) այծի մորթից գդակը, որի երկայն, գանգուր մազերը թափվում էին մինչև երեսի կէսը, կիսով չափ ծածկելով աչքերը։ Այդ տալիս էր նրա դէմքին մի անհաւատ արտայայտութիւն։ Շապիկի վրա հագել էր գառան մորթից պատրաստած, կարճ մուշտակը, գոտեորած նեղ, կաշեայ փոկով, որից քարշ էին ընկած լեզկու խէնջարը, վառօդի և գնտակի ամաններ, և իւզով լցրած, երկաթի մի տուփ զէնքեր օծելու համար։ Մուշտակի լերկ սեկը ծառայում էր որպէս երես, իսկ մաղոտ կողմը որպէս աստառ։ Լայն շալվարը պատրաստված էր տեղային կոշտ չուխայից, որի ստորին մասը, ծնկներից ցած, հաւաքված էր կաշուց կարած զանկալների մէջ։ Գետոյ մերկ, առանց գուլբայի ոտների վրա կապել էր տրեխները։

Հայրենիքից բերած իր բոլոր հարստութիւնը—ձին, հագուստը, փողերը—ծախսելէն յետոյ, նա կարողացաւ պահել զէնքերը միայն։ Ներքինապետի թանդագին ընծան, Միւնեաց աշխարհի մի հզօր թագաւորի թուրը, նա խնամքով փաթաթելով, պահ էր տուել իր նոր խնամակալի՝ Սիկօի տանը։ Նրան չէր գործածում, իսկ մնացածը՝ հրացանը, ատրճանակները և խէնջարը գործ էր ածում։ Աւազակների բազմութիւնը ստիպ էր տուել հովիւներին ցուցի հետ կրել և հրացան, իսկ մախաղի հետ գնտակի ու վառօդի ամաններ։

Ցաճախ կրկնվող գողութիւնները պատճառ էին տալիս պատանի Դաւթին անդադար կռուել վտանգների դէմ։ Նա գործ ունէր բացի ուսականներից և գաղանների հետ։ Լեռները, անտառները լիքն էին գայլերով, արջերով և վագրներով, իսկ գրանցից աւելի վատթար էին վայրենի օսերը, իմերելները, խեվսուրները և կովկասեան լեռների բազմաթիւ, խառնիճաղանճ ցեղերը։ Ամենի դէմ պէտք էր պահպանել հօտը, ամենի հետ պէտք էր կռուել—Ահա այդ սրի,

*) Մուրգուզ այծերի մի տեսակն է, որ երկայն, գանգրահեր մազեր ունի։

ԴԱՒԻԹ ԲԷԿ

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԷՊ

(1722—1728)

—

Զ.

Հովիւը, որ ընդունեց իր մօտ պատանի Դաւթին, կոչվում էր Սիկօ։ Քառասուն տարեկան հաղիւ կը լինէր նա։ մի հաստաւորագլուխ մարդ էր Սիկօն թէ խելքով և թէ մարմնով։ Նրա ընտանիքը շատ մեծ չէր։ երկու աղջիկներ և մի տղայ ունէր Սիկօն։ Որպէս ամեն վրացի, դէպի իր ընտանիքը բնաւ հոգ չունէր Սիկօն։ Նա այն աստիճան ընտելացած էր իր ոչխարների հետ և այնքան սիրում էր նրանց, որ բոլորովին մոռացել էր թէ կնոջը և թէ զաւակներին։ Խիստ հազիւ էր պատահում, որ Սիկօն իր տան չէմքի վրա ոտք կոխէր, այդ պատճառով Մրցիէթի մէջ առակ էր դարձել ամեն մի հնութեան մասին ասել։ «այդ անցքը այն ատրում պատահեց, երբ Սիկօն եկել էր իր տունը»։ Ամբողջ ցերեկը իր հօտի հետ անց էր կացնում նա արօտատեղերում, իսկ գիշերը պառկում էր իր տիրոջ գոմի մէջ, որ մի քանի քայլ միայն հեռու էր իր տունից։ Որպէս վարձ իր ծառայութեան համար, ամեն տարի մեծ պարոնի կալից ստանում էր Սիկօն հինգ ջուալ սիմինդր, հարիւր չափ գինի, տասերկու բիեալ փող, մի չալիկ, մի ոտաշոր, երկու զոյգ տրեխներ, մի խօսքով մօտաւորապէս նոյնքան, որքան ստանում էր մի գնդապետ։ Այդ նախանձելի ռօճիկը տալիս էին Սիկօի տանը և նրա ընտանիքը կերակրվում էր։ Իսկ պատանի Դաւիթը, մեծ պարոնի մեծ հովուի օգնականը, ռօճիկ չէր ստանում. դրա համար պէտք էր դեռ երկար ծառայութիւն։ Նա ստանում էր ամեն առաւօտ միայն օրական հաց, որը իր մախաղի մէջ դրած, տանում էր հետը, բայի դրանից, ստանում էր ամեն տարի մի ձեռք հագուստ։

Այնուամենայնիւ, նա շատ գոհ էր իր նոր վիճակով։ Լեռնային օդը, արձակ կեանքը նրա վրա խիստ բարերար ազդեցութիւն գործեցին։ Եղանակի խստութիւնից կոշտացած և արևից այրված նրա դէմքը, թէև այժմ կորցրել էր իր նախկին քնքշութիւնը, բայց աւելի այրական կերպարանք էր ստացել, որ արտայայտում էր երկաթի առողջութիւն և մարմնի անհամեմատ զօրութիւն։ Նրան այժմ դժուար էր ճանաչել իր հովուական նոր հագուստի մէջ, որ ոչքից մինչև գլուխ բաղկացած էր անասունների կամ մորթից կամ կաշուց։ Գլխին դրած ունէր մուրգուզ *) այծի մորթից գդակը, որի երկայն, գանգուր մազերը թափվում էին մինչև երեսի կէսը, կիսով չափ ծածկելով աչքերը։ Այդ տալիս էր նրա դէմքին մի անհաւատ արտայայտութիւն։ Շապիկի վրա հագել էր գառան մորթից պատրաստած, կարճ մուշտակը, գոտեորած նեղ, կաշեայ փոկով, որից քարշ էին ընկած լեզկու խէնջարը, վառօդի և գնտակի ամաններ, և իւզով լցրած, երկաթի մի տուփ զէնքեր օծելու համար։ Մուշտակի լերկ սեկը ծառայում էր որպէս երես, իսկ մաղոտ կողմը որպէս աստառ։ Լայն շալվարը պատրաստված էր տեղային կոշտ չուխայից, որի ստորին մասը, ծնկներից ցած, հաւաքված էր կաշուց կարած զանկալների մէջ։ Գետոյ մերկ, առանց գուլբայի ոտների վրա կապել էր տրեխները։

Հայրենիքից բերած իր բոլոր հարստութիւնը—ձին, հագուստը, փողերը—ծախսելէն յետոյ, նա կարողացաւ պահել զէնքերը միայն։ Ներքինապետի թանդագին ընծան, Միւնեաց աշխարհի մի հզօր թագաւորի թուրը, նա խնամքով փաթաթելով, պահ էր տուել իր նոր խնամակալի՝ Սիկօի տանը։ Նրան չէր գործածում, իսկ մնացածը՝ հրացանը, ատրճանակները և խէնջարը գործ էր ածում։ Աւազակների բազմութիւնը ստիպ էր տուել հովիւներին ցուցի հետ կրել և հրացան, իսկ մախաղի հետ գնտակի ու վառօդի ամաններ։

Ցաճախ կրկնվող գողութիւնները պատճառ էին տալիս պատանի Դաւթին անդադար կռուել վտանգների դէմ։ Նա գործ ունէր բացի ուսականներից և գաղանների հետ։ Լեռները, անտառները լիքն էին գայլերով, արջերով և վագրներով, իսկ գրանցից աւելի վատթար էին վայրենի օսերը, իմերելները, խեվսուրները և կովկասեան լեռների բազմաթիւ, խառնիճաղանճ ցեղերը։ Ամենի դէմ պէտք էր պահպանել հօտը, ամենի հետ պէտք էր կռուել—Ահա այդ սրի, վառօդի և արեան դպրոցից ստացաւ պատանի Դաւիթը իր սկզբնական պատերազմական կըրթութիւնը։

Բարեխիղճ Սիկօն այնքան ներոզամիտ էր դէպի իր պատանի օգնականը, որ երբեմն նրան թոյլ էր տալիս հեռանալ հօտից և պարապվել որսորդութիւնով։ Այսպիսով նա աւելի վարժվեցաւ հրացանագործութեան մէջ և նրան յաջողվում էր գնտակահար առնել ոչ միայն նապաստակներ նրանց փախչելու միջոցում, այլ շատ անգամ սպանում էր արագավազ, վայրի այծեր, եղջերուներ, արջեր և այլ անասուններ։ Շուտով նա մեծ հռչակ ստացաւ թէ իր ընկերների և թէ շրջակայ լեռների հովիւների մէջ։ Նրա համբաւը հասաւ մինչև անգամ մեծ պարոնին, որին ծանօթ լինելու պատիւն ունեցաւ, երբ իր որսերից երբեմն տանում էր տիրական սեղանի համար և փոխարէնը նրան ընծայում էին վառօդ, գնտակ, և առատ գինի էին խմեցնում մեծ պարոնի մառանից։

Մեծ պարոնի այդ ողորմածութիւնը դէպի պատանին չափազանց ուրախացնում էր բարեսիրտ Սիկօին, և նա մի առանձին նախազգացմունքով շատ անգամ կրկնում էր նրան.—Նա խմանում եմ, դու վերջը թ ա ւ ա դ (աղնուական) կը դառնաս։

—Ինչով, հարցնում էր պատանին, ինքն էլ չը հաւատալով իր ականջներին։

—Ի՞նչպէս թէ ինչով, կը դառնաս էլի, պատասխանում էր նա հաստատ հաւատով և պատմում էր պատանուն զանազան օրինակներ, որոն-

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

—

Փետրվարի 26-ին

Բարեկենդանի վերջին շաբթում տեղիս սուրբ Գայիանեան օրիորդական դպրոցի դահլիճում երեք ներկայացում կայացաւ։ Առաջին ներկայացումը երաժշտահանդէս (կօնցերտ) էր, որ գլուխ եկաւ պ. Աղ. Մելիք Աղամալեանցի մասնակցութեամբ և որի արդիւնքը՝ մօտաւորապէս 270 բուբլին՝ յատկանալու է Սահակ-Անուշեան դպրոցին. երկրորդը «Պեպօ» պիեսան տուեցին տեղիս պրոգիմնազիայի աշակերտները Գայիանեան օրիորդական դպրոցի օգտին, որ հաստատում է, ինչպէս լսում ենք, 80 բուբլաւ։ Հանդիսականները այս երկրորդ ներկայացման մէջ գլխաւորապէս պատկանում էին վաճառականական և արհեստաւորների դասին։ Հետեւեալ օրը, այսինքն այս փետրվար ամսի 21-ին, շաբաթ օրը տրուեցաւ առաջին անգամ «Սէր և Նախապաշարմունք» պիեսան և նրան կցվեցաւ պ. Վ. Մաղաթեանցի Կըռթ-կըռթը»

Ես, առաջին երկու ներկայացումը թողած, խօսելու եմ վերջինի մասին, որ, բաւական յաջող անցնելու պատճառով, ժողովրդի վրա բաւական ուրախալի տպաւորութիւն թողեց։

Պէտք է խոստովանվել, որ այդ թատերական գրվածքը այնպիսի մի ծանր պիեսայ է, որ պահանջում է բեմական յարմարութիւններ և բացի դրանից կարօտ է շատ կրկնութիւնների դերասանների կողմից։ Թէև այդ երկու պայմաններն ևս պահպանված չէին, այնուամենայնիւ խաղը այնպէս գեղեցիկ անցաւ, որ հանդիսականների բերանից լսվում էր. «մի այսպիսի ներկայացումն Երևանը առաջին անգամ է տեսնում»։ Իրրև ապացոյց, թէ մինչև որ աստիճան հանդիսականները համակրութեամբ վերաբերվեցին դէպի այդ ներկայացումը,—կարող է լինել այն, որ օրիորդ Փառանձեմ Մելեանցը լօրդ Գլեսթինգի աղջկայ՝ Լէլիի դերում արժանացաւ մետաքսեայ փողպատներով զարդարած մի ծաղկեայ մեծ օղի և բացի դրանից դերասանները ընդունվում էին բուռն ծափահարութեամբ։ Որովհետև մենք շատ լաւ ենք ճանաչում Երևանի թատրոնասէրների խումբը և գիտենք, թէ ինչպէս են նրանք գլուխ բերում իրանց ներկայացումները, այս պատճառով խորհուրդ կը տայինք, որ նրանք շատ չը յափշտակվին ժողովուրդի այդ համակրութեամբ, այլ վերաբերվին գործին այնպէս, ինչպէս հարկն է։ Պահպանել հասարակութեան աչքում թատրոնի բարձր, կրթողական նշանակութիւնը, նրա գաղափարը—ահա թէ ինչ պէտք է միշտ ի նկատի ունենան մեր թատրոնասէրները ներկայացումներ կազմելու ժամանակ։ Նրանք թող հեռու կենան այն մտքից, թէ նպատակը արդարացնում է միջոցները։ Նրանց նպատակն է, ասենք, ուսումնարանները սպահովեցնել դրամական կողմից, բայց մթթէ ներկայացումներ տալու ժամանակ չը պէտք է դերերը այնպէս ընտրութեամբ բաժանել, այնչափ կրկնութիւններ անել, որ դերասանները բոլորովին պատրաստված դուրս գան բեմ և ժողովուրդը առիթ չունենայ ասելու «դրանց նպատակն էր միայն փող պոկել մեզնից և նրանք հասան իրանց փափագին, առանց մտածելու, թէ մեզ ևս հարկաւոր է մտաւոր ու բարոյական բաւականութիւն ստանալ»։

Մենք պ. պ. թատրոնասէրների ուշադրութիւնը դարձնում ենք այս կէտի վրա նրա համար, որ այժմ հասարակութեան մէջ հազիւ հազ սկսվել է հասարակական փողով թատրոն շինելու հարցը, բայց եթէ մենք չաշխատենք նրամոտ պահպանել թատրոնի նշանակութիւնը, նա բոլորովին կը սառի և մենք թիֆլիսեցիների պէս դեռ երկար կը սպասենք, մինչև ունենանք հասարակական թատրոն, (որից մինչև այժմ թէև նրանք ևս զուրկ են) և մշտական խումբ։ Վերջին ներկայացումից ստացած օգուտը, ծախքերը հանած, անպատճառ կը լինի 300 բուբլի, որ սեփականացնում է սուրբ Գայանեան օրիորդական դպրոցին։

Բովհաննէս-Հեթում

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ՇԱՄԱԽՈՒՑ պ. Էմմանուէլ Փիրբուդաղեանց ուղարկել է մեզ 8 բուբլ հետեւեալ նամակով։ «Ուղարկելով սրա հետ ոսկի փետրվար ամսին տաճկաբնակ մեր սովալլուկ եղբայրների համար իմ խոստացած գումարն 8 բուբլ, խնդրեմ բարեհաճել տեղ հասցնելու»։

—

ԴԷՐԲԷՆԴԻՑ տիկին Կատարինէ Շահնազարեանց դէ-Շտիուր ուղարկելով մեզ 15 բուբլ, գրում է մեզ հետեւեալ նամակը։ «Ուղարկելով նամակով տասն և հինգ բուբլ յօգուտ վասպուրականի սովելոց, խոնարհաբար խնդրեմ նեղութիւն կրէք այդ գումարը ուր հարկն է հասցնել»։

—

ՇԱՄԱԽՈՒ հայ-աւետարանականներից ստացանք 20 բուբլ պ. Սարգիս Համբարձումեանցի հետեւեալ նամակով։ «Դարձեալ ուղարկելով ձեզ քսան բուբլ մեր Վանայ սովատանջ ազգայնոց համար, որից 12 բուբլ 75 կոպէկ Գնօզչայի հայաւետարանական փոքրիկ խմբից եմ ստացել, իսկ 7 բուբլ 25 կոպէկ տեղիս եկեղեցու անդամներից, խնդրում եմ հասցնել ուր հարկն է»։

—

«Русскій Курьеръ» լրագիրը իր առաջնորդող յօդուածում խօսելով Շակէեվի առաջարկութեան մասին, ասում է որ մամուլը, ինչքան էլ պաշտպանի այս կամ այն միտքը, երբէք չէ կարող մենակ այն նշանակութիւնն ունենալ կառավարութեան աչքում, ինչ նշանակութիւն նա կը ստանար, եթէ պաշտպանված լինէր և ժողովրդի այլ և այլ դասակարգերի ներկայացուցիչների կողմից արած խնդրագիրներով ազգի այս կամ այն կենսական պահանջի մասին։ Մեր այլ և այլ դասակարգերի ներկայացուցիչների ժողովները աւելի մեծ իրաւունքներ ունեն, քան թէ իրանք կարծում են, շարունակում է ռուս թերթը, և մինչև այժմ չը գիտեն օգուտ քաղել իրանց ձեռքումն ունեցած իրաւունքներից, որոնց հիման վրա կարող էին ազգի անհրաժեշտ պէտքերի մասին միջամտել կառավարութեան առաջ։

—

Ռուսները սկսում են գործ դնել ընտրութիւնների մէջ այն ձեւը, որ գործ են դնում եւրոպացիները և ամերիկացիները։ Մոսկվայում Պօբեդոնոսցէվի, կամենալով ընտրվել քաղաքագլուխ, բրոշիւրներ է հրատարակում, որոնց մէջ պարզապէս յայտնում է իր ընտրողներին թէ ինչ ուղղութեան, գործունէութեան ինչ եղանակին կը հետեւի, եթէ նրան ընտրեն քաղաքագլուխ։ Այդ առիթով «Русскій Курьеръ» լրագիրը այն միտքն է յայտնում թէ ընտրողական այդ ձեւը հազար անգամ աւելի ազնիւ է, քան թէ սրան նրան դիմելով, խնդրելով, խնամութիւններ անելով հասնել իր ցանկացած նպատակին։ Բացի սրանից մի մարդ, որ ընտրութիւնից առաջ յայտնում է թէ ինչ ուղղութեան կը հետեւի, երբ ընտրված կը լինի, բարոյապէս կապվում է պարտաւորութիւններով իր ընտրողների հետ, այն ինչ, առհասարակ, մենք ընտրում ենք մարդիկ հասարակական պաշտօնների վրա, առանց նրանց ճանաչելու, առանց իմանալու թէ ինչ ուղղութեան կը հետեւեն, երբ ընտրված կը լինեն։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՒՐՔԻԱ

—

Որքան ժամանակն անցնում է, այնքան կ. Պոլսի բարձր շրջաններում համոզվում են, որ յունական հարցը մէկ ծանր բեռն է դարձել Բ. Դրան համար, որը դժուարութեամբ տանում է իր ուսերի վրա։ Այդ հարցը այնքան ճնշում է Թիւրքաց կառավարութեանը, որ նա ոչինչ բանի ձեռնարկել չէ կարող։ Ոչ մի հանրաօգուտ գործ չէ կարելի սկսել քանի որ Թիւրքաց պաշտօնեաները զբաղված են նոր նախագիծներ կազմելով և զանազան առաջարկութիւնների քննադատութեամբ, որոնցից ոչ մէկը իրագործելի չէ։ Մի խօսքով շատ հարցեր, օրինակ ֆինանսների կազմակերպութիւնը, վերանորոգութիւնների մտցնելը, վաճառականութեան և արհեստաւորների ծաղկեցնելը, որոնց անյապաղ վճռելուց կախված է կայսերութեան գոյութիւնը, տեղ են տալիս յունական հարցին։

Թէ որքան մեծ են Թիւրքաց կառավարութեան կորուստները, թւել անկարելի է։ Վաճառականութիւնը շատ դանդաղ է գնում, որովհետև երկրի արդիւնաբերութիւնը շատ քիչ է, երկրագործութիւնը կորչում է և արուեստագործութեան վերջին հեռքերն ևս անհետանում են։ Քաղաքների մէջ աշխատանք և գործունէութիւն չը կայ, գիւղում—նոյնպէս։ Ամեն տեղ տիրում է կասկած և անհաւատարմութիւն, անգործութիւն և նրա կորստաբեր հետեւանքները։ Միլիոնաւոր մարդիկ օրական աշխատանքով են ապրում և մէկ հիմնաւոր գործ չեն սկսում, վախենալով վնասներ կրել։

Եթէ գծել կարելի լինէր հաւատացած լինել, որ ժողովուրդին առ ժամանակ դըժուար դրութեան մէջ դնելով, Թիւրքիան վերջ ի վերջոյ գործը կը տանի—այն ժամանակ էլի կարելի է համբերել։ Կայսերութեան բնակիչները մեծ յարգանք ունեն դէպի իրանց կառավարութիւնը և անտրտունջ կենթարկվեն զրկանքներին, եթէ պետութեան շահերը այդ են պահանջում, բայց քանի որ ապացուցված չէ, որ այդ զրկանքները գործնական հետեւանքներ կունենան, այլ, ընդհակառակն, կարելի է սպասել որ Եւրոպան չի հրաժարվի իր պահանջներից, արդեօք յիմարութիւն չէ՞ բոլոր բնակիչներին տանջել և զրկանքներին ենթարկել։

Գերմանական դեսպան կոմ Հացֆէլդ, կ. Պոլսում գտնված դեսպաններից ամենաւագը, հոսաւ այստեղ։ Նրա գալովը կ. Պոլսի դեսպանների թիւը լրացաւ։ բանակցութիւնները սկսվեցան։ Առաջուց անկարելի է նախատեսել, թէ հարցը խաղաղութեամբ կը վերջանայ, թէ թնդանօթաձգութեամբ։ Կասկած չը կայ, որ Թիւրքիան և մանաւանդ սուլթանը պատերազմ չեն ցանկանում։ Պալատական կուսակցութեան անդամների մէջ, ճշմարիտ է կան պատերազմի կուսակիցներ, բայց այդ կուսակցութիւնը զօրեղ չէ և դրան միայն այն ժամանակ կը լսեն, երբ անկարելի կը լինի բաւարար պայմաններ կապել։ Թիւրքիայում եղած խելօք և ազդեցութիւն ունեցող մարդկանց

ցից կարելի էր եզրակացնել, թէ իր ենթադրութիւնը անտեղի չէր։

—Միանգամ, պատմում էր նա, մեծ պարոնը ընթրիք պիտի տար իր դրանիկներին։ «Ով կը լինի այն քաջը, որ կը որսայ մի եղջերու իմ սեղանի համար», ասաց նա իր դիւանին։ Բոլոր թաւաղների որդիները վեր առեցին իրանց հրացանները, վազեցին դէպի լեռները, դէպի անտառները, ամբողջ օրը ման եկան և գիշերը դարտակ վերադարձան։ Այդ միջոցին մեծ պարոնի տունը ներս մտաւ քէչալ Դաւչօն, մի ահագին եղջերու չալակած։ «Շատ լաւ տղայ ես, Դաւչօ», ասաց նրան մեծ պարոնը, իր ձեռքը նրա ուսին խփելով, և իսկոյն հրամայեց հրավարտակ գրել, նրան թաւաղութիւն շնորհեց, և բացի դրանից, քառասուն տուն էլ ճորտեր բաշխեց։

—Ո՞վ էր այդ Դաւչօն, հարցրեց պատանին զարմանալով։

—Ո՞վ պէտք է լինէր. մի անգործ, արբեցող անպիտան, որ ամբողջ օրով կը բանէր ամեն մի մարդու տանը, եթէ նրան մի գաւաթ գինի կը տային։

Իսկ պատանին ոչ աղնուականութեան վրա էր մտածում և ոչ ճորտերի, նա իրան բախտաւոր ու երջանիկ էր համարում, երբ երբեմն տեսնում էր գեղեցիկ Թամարին, երբ լսում էր նրա բերանից մի քանի քաղցր խօսքեր և երբ զմայլում էր նրա դէմքի անմեղ ժպիտով։

Թամարը այժմ սկսել էր աւելի յաճախ գալ ոչխարների մօտ։ Նրա համար անտառային պտուղներ քաղելու հոգսը, որ առաջ կատարում էր Սիկօն, այժմ յանձն էր առել պատանին։ Նա գնում էր անտառի ամենախուլ տեղերը, մտնում էր թուփերի ամենախճճված թաւուտների մէջ, պատառոտում էր իր հագուստը, փչերով ծեւատում էր իր ձեռքերը, հաղար ու մէկ վտանգների էր ենթարկում իր անձը, նրա համար նորանոր պտուղներ գտնելու համար։ Ահա այն բարձր ժայռից քարշ ընկած մացառների մէջ երևում են հասուն մորիներ, կամ կարմիր ելակներ, բայց այնտեղ բարձրանալու համար կարելի է ոտքը կոտրել, գլուխը ջախջախել,— այդ մի և նոյն էր Դաւթի համար, վտանգներից չէր վախենում նա։ Նա պատրաստ էր մինչև անգամ մահ յանձն առնել, միայն թէ կարողանայ քաղել խնդրած պտուղները։ Նա լցնում էր այդ պտուղները իր ձեռքով հիւսած փոքրիկ զամբիւղների մէջ և պահում էր Թամարի համար։

Մի անգամ պտուղները Թամարին տալու ժամանակ պատանին ընծայեց նրան և մի փունջ ծաղիկ։ Դաւիթը զուրկ չէր քնքոյշ զգացմունքներից, բայց նրան պակասում էր կիրթ ճաշակը։ Նա իր փունջը կազմել էր ամբողջապէս դեղին ծաղիկներից։

—Ես դեղին ծաղիկներ չեմ սիրում, ասաց Թամարը, թէև ընդունելով փունջը։

—Ապա ինչ գոյն ես սիրում, հարցրեց պատանին, սատիկ կարմրելով իր անշնորհքութեան վրա։

—Կարմիր, վարդագոյն, մանիշակագոյն, կապոյտ, ու դրանց նմանները, պատասխանեց Թամարը, մի և նոյն ժամանակ չը դադարելով ճաշակել իրան մատուցած պտուղների հաւունները։

—Ինչու դեղինը չես սիրում։

—Չեմ սիրում, ինքս էլ չեմ իմանում, թէ ինչու չեմ սիրում, ասաց նա իր փունջի վրա նայելով։— Ես դեղին գունով շորեր էլ չեմ հագնում, երբ ինձ համար կարում են։

—Դու, երևի, կարմիրն ես սիրում, պատասխանեց պատանին մի առանձին հրճուանք նայելով Թամարի վրա։— Առաջին անգամ, երբ ես քեզ տեսայ, էլի այսպէս կարմիր դերիայ ունէիր հագած, ինչպէս հիմայ։

—Առաջին անգամ որտեղ տեսար ինձ, հետաքրքրութեամբ հարցրեց Թամարը։— Այդ երբ էր։

—Երկու տարի առաջ։ Ես քեզ տեսայ ճանապարհին, քոծերի հետ տուն էիր գնում. դու ինձ կաթ խմացրիր։— Չես յիշում։

Թամարը մատը դրեց բերանին, գեղեցիկ, երկայն թերթերունքներով պատած վերնակոպերը խոնարհեցրեց, մտածութեան մէջ ընկաւ։ Քոչէական լռութիւնից յետոյ, գլուխը բարձրացրեց, և ուզիղ պատանու երեսին նայելով, ասաց։

—Չեմ յիշում։ Երկու տարի դրանից առաջ... ես քեզ ճանապարհին կաթ խմացրի... չեմ յիշում... կրկնեց նա մի առանձին խորհրդաւոր ձայնով։

Այո, երկու տարի առաջ.... պատասխանեց պատանին սրտի բարախմունքից դողդողուն ձայնով։— Այն օրից ես յանձն առայ ձեր հովիւը լինել։

—Ի՞նչու, հարցրեց Թամարը և մի նուրբ ժպիտ փայլեց նրա սիրուն շրթունքների վրա։

—Որ կարողանամ քեզ շուտ-շուտ տեսնել։

Վերջին խօսքը լսելու ժամանակ, Թամարը ծիծաղելով փախաւ Դաւթի մօտից, իսկ հեռանալու միջոցին կանգ առեց, և ապշած պատանու ականջներին հասան հետեւեալ խօսքերը։ երբ նա իր ուրախութեամբ լի դէմքը դարձնելով, ասաց հեռուից.

—Ես թէև դեղին ծաղիկներ չեմ սիրում, բայց այդ փունջը ինձ հետ կը տանեմ, նրա համար որ դու ես քաղել,—կը պահեմ ու միշտ կը պահեմ սրտիս վրա...

Այդ խօսակցութիւնը պատանու և Թամարի մէջ տեղի ունեցաւ ոչխարների կայարանից փոքր ինչ հեռու, մի առուակի ափի մօտ։ Խիտ թուփերը ծածկում էին նրանց թէ հովիւների և թէ Թամարի հետ եկած աղախինների աչքերից։ Վերջինները այդ ժամանակ զբաղված էին ոչխարները կթելով։ Բայց թէ պատանին և թէ մանկահասակ աղջիկը չը կարողացան նկատել, որ նրանցից մէկը, սատանայի նման թուփերի մէջ թագնվելով, ուշադրութեամբ լսում էր երկու սիրահարների մտերմական խօսակցութիւնը, և մեծ հետաքրքրութեամբ զննում էր նրանց բաղդաւոր երեսների գծերի ամենափոքր շարժումները, և արտայայտութեան ամենաթեթև նշմարը։

նշանաւոր մեծամասնութիւնը խաղաղութեան կուսակից է, բայց այնու ամենայնիւ պատերազմի շանսերը նոյնպէս մեծ են։

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼ-ԴԷՄՈԿՐԱՏՆԵՐԸ ԱՄԵՐԻԿԱՑՈՒՄ

—

Գերմանացի երկու ամենայայտնի սոցիալիստները, գերմանական պարլամենտի անդամներ Ֆրիչէ և Ֆիրէկ այժմ Ամերիկայումն են գտնվում, որտեղ նրանք պրոպագանդա են անում իրանց գաղափարի աջողութեան համար։

Ամերիկայում քաղաքից քաղաք շրջելով, այդ երկու պարոնները ժողովներ (միտինգներ) են կազմում, այդ ժողովներում ճառեր են ասում, յայտնելով այն միտքը, թէ գերմանական կառավարչական ձևը փոխելու համար ոչ թէ նոյն իսկ Գերմանիայում յեղափոխութիւն է հարկաւոր, այլ այդ գաղափարի համար պրոպագանդա է հարկաւոր օտար երկիրներում, մանաւանդ Ամերիկայում, որ ամենից շատ է համակրում ազատութեան գաղափարին։ Ժողովներում գումարվում են երկուսից մինչև երեք հազար հոգի։ Գերմանիայի սոցիալ-դէմոկրատներին մեծ համակրութեամբ են ընդունում Ամերիկայում։

Վերջին միտինգ վճիռ է կայացրել մաւոր անընդհատ պրոպագանդայի միջոցով օգնել գերմանական սոցիալ-դէմոկրատական կուսակցութեանը վերականգնեցնել ազատութիւնը Գերմանիայում և այդ պրոպագանդայի համար մեծ գումարներ են հանգանակվում Ամերիկայում։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Մարտի 4-ին, ֆրանսիական սենատի նստում շարունակվում էին վիճաբանութիւնները ընդհանուր մաքսային տարիֆի մասին։ Այդ վիճաբանութիւնների ժամանակ դահլիճը մտաւ Վիկտոր Հիւգո, որը փետրվարի 27-ից չէր յաճախում սենատի նիստերին։ Զախակողմեան և կենտրոնի անդամները սկսեցին սաստիկ ծափահարել նրան։ Շատ սենատորներ կանգնեցան, միւսները բանաստեղծի շուրջը հաւաքվեցան նրա ձեռքը սեղմելու համար։ Վիկտոր Հիւգոն խօսեց. «Սենատի այս ուշադրութիւնը բոլորովին անսպասելի էր ինձ համար։ Չեմ կարող արտայայտել, թէ որ աստիճան զգածված եմ ես։ Իմ անարտայայտելի շփոթութիւնը շնորհակալութիւն է։ (Ծափահարութիւններ)։ Յայտնում եմ սենատին և նրա բոլոր անդամներին իմ շնորհակալութիւնը նրա յարգանքի և համակրութեան այս ապացոյցի համար։ Նստում եմ իմ տեղը խորը զգածված։ (Շարունակ ծափահարութիւններ)։ Նախագահը.—Հանձարը բռնեց իր տեղը։ Սենատը ծափահարեց Նրան և շարունակում է իր պրապոզիցիաները։ (Ծափահարութիւններ)։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3-ին մարտի։ 3 ժ. 3 լոպէ։ «Նովոյէ Վրեմիա» լրագիրը հաղորդում է Նովիկովի պատմութիւնը, որ վիրաւորված թագաւորին տանում էր. թագաւորը գոհ էր զօրահանդէսից և ինչպէս երևում էր լաւ տրամադրութեան մէջ էր։ Նովիկովը երկու ընկերներով գնացին Մանէժից Նեվսկի պրոսպէկտով. մօտենալով կազանսկի կամրջին նոքա լսեցին բարձրաձայն պայթիւն. Նովիկովը սկսաւ վազել Եկատերինեան ջրանցքի եզրափողոցով դէպի այն կողմը, որտեղից լսվեցաւ պայթիւնը։ Նա 30 քայլ հեռու էր այնտեղից, ուր երևում էր մարդկանց խումբ, յանկարծ բարձրացաւ ձիւնի թանձր սիւն և լսվեցաւ նոր պայթիւն. նա աւելի արագութեամբ վազեց։ 8 նաւաստիներ բռնած ունէին մի մարդու. ինչ որ բղաւեցին, բայց նա չը լսեց. ձիւնը փորած էր և ծածկած ամբի կտորներով և վիրաւորվածներով, պառկած էր մեռած երեխայ, վիրաւորված թիկնապահը և էլի մի անձն. այստեղ էլ ձիւնի վրա պառկած էր թագաւորը առանց գլխարկի և վերարկուի, ոտները փշրած էին, շորերը պատռտած էին. արիւնը հոսում էր ոտներից, ձիւնի վրա արեան բիծեր էին. Նովիկովը լաց եղաւ և մօտեցաւ թագաւորին ասելով, Տէր Աստուած, ի՞նչ արին Ձեր Մեծութեան. թագաւորը անշարժ պառկած էր, մօտեցան նաւաստիները և սոցա օգնութեամբ Նովիկովը բարձրացրեց թագաւորին, գրկելով աջ ձեռքով մէջքը և ձախով կուրծքը, նաւաստիները պահպանում էին ոտքերը, առանց ձեռքերից հրացանը թողնելու։ Այսպէս անցան մի քանի քայլ, թագաւորը երկու անգամ ասաց. ցուրտ է, ցուրտ, և աշխատում էր ձեռքը մօտեցնելու ձակատին, որի վրա արիւն էր։ Նովիկովը պահպանելով թագաւորին մի ձեռքով, միւսով հանեց գրպանից թաշկինակ, որ փաթաթէ թագաւորի գլուխը։ Այս ժամանակ մօտեցաւ Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլայևիչը. «Սաշա, ի՞նչպէս ես քեզ զգում», ասաց նա, գլուխը թագաւորին մօտեցնելով. ի՞նչ պատասխանեց թագաւորը, դժուար էր լսել, միայն նա ինչ որ ասաց. ոչ մի հառաչանք չարձակվեցաւ կըրծքից։ Մեծ Իշխանը հրամայեց նաւաստիներին թողնելու հրացանները և մէկի գդակը հանելով ծածկեց թագաւորի գլուխը. նրան առաջ տարան. ժողովուրդը հաւաքվեցաւ ամեն կողմից, շատերը ծունր էին դնում երկրպագելով, հեկեկալով լաց էին լինում։ Ցանցվողին դնելու տեղ չը կար. գընդապետ Դվորժիցկու ձիաները պայթիւնից վախեցան, փախան դէպի Թատրոնական կամուրջը, կապիտան Ֆրանը վազեց նրանց ետևից. մօտիկ կանգնած էր հասարակ սահնակ, սորանով դժուար էր տանել վիրաւորեալին։ Նովիկովը դարձաւ դէպի Մեծ Իշխանը խնդրելով, որ թոյլ տայ տանելու թագաւորին այն տուն, որ գտնվում է իսկոյն կամրջի միւս կողմում, որպէս զի կարելի լինի վերքը կապել։ Երևում էր, որ թագաւորը իր զարհուրելի տանջանքների ժամանակ էլ ուշքը չէր կորցրած, նա լսելով այս նախադասութիւնը, պարզ ասաց, «տարէք պալատը, այնտեղ թո՛ղ մեռնեմ» և էլի ինչ որ դժուար էր հասկանալ. այս խօսքերը վերջին ճիգն էին շարչարվողի. նա փակեց շրթունքն ու աչքերը և աւելի ոչ մի խօսք չարտասանեց։ Մօտեցան Դվորժիցկու ձիաները, թագաւորին նստացրին սահնակը, երկու կողմից նրան պահպանում էին, նա նստած էր թեկն ընկած, գլուխը կախ դցած։ Սկզբում գնում էին քայլով, բայց թագաւորի դիմը նուազում էր, հըրամայվեցաւ աւելի շուտ երթալ, սահնակը վազեց, ժողովուրդը երկու կողմ վազում էր բղաւելով, վրդովելով և լալով։ Թագաւորին ներս տարան պալատը։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 4 մարտի։ Պաշտօնապէս հաղորդում են. մարտի 6-ին նշանակված է ի Տէր Հանգուցեալ թագաւորի մարմնի տեղափոխելը Զմեռնոյին պալատից Պետրոպավլովսկի մայր-եկեղեցին։ «Голосъ» լրագիրը հաղորդում է եղեռնագործութեան ականատես պօղպօրուշիկ Բուդակովսկու պատմութիւնը. Զինախաղից վերադառնալու ժամանակ ճայթիւն լսեցի և սկսեցի վազել դէպի պատահած անցքի տեղը։ Կամուրջը անցնելուց յետոյ, տեսայ թագաւորի կանգնած կառքը։ Փայտեայ դռների մօտ, ջրանցքի վանդակապատի մօտ մարդկերանց մի խումբ էր կազմվել, որ բռնել էր չարագործին։ Վազելուց յոգնած ես և Պրեսբրաժենսկի օֆիցերներից մէկը խումբից 10 քայլ հեռանալով, մօտ վազեցինք թագաւորին և ետևից Նրան չը ճանաչելով, հարցրինք. ինչ պատահեց թագաւորին։ Թագաւորը, շարունակելով գնալ, յետ նայեց և խաչակնքվելով ասաց. փառք Աստուծոյ, ես ազատվեցայ։ Բայց ահա. կառքի մօտ ընկած էր վիրաւորված կոզակ, մի փոքր հեռու բղաւում էր վիրաւորված փոքր տղայ։ Լսելով թագաւորի խօսքերը, չարագործը նկատեց. արդեօք վաղ չէ՞ փառք Աստուծոյ ասել։ Այդ ո՞վ է, հարցրեց թագաւորը։ Մէկը պատասխանեց. մեշչանին Գրեբենշչիկով։ Նրա ձեռքից խլած ռէվոլվերից ծուխ էր դուրս գալիս։ Մէկ էլ կայ, ասաց նա։ Նրա գրպանները փնտռելով մի դաշոյն գտան։ Ժողովուրդը աղաղակում էր՝ վանդակապատից էին կրակ արձակում։ Ես հրամայեցի կոտրել դռները, խուզարկել այգին և յետ դարձայ թագաւորի մօտ։ Ես նրանից 10 քայլ հեռու էի, երբ սարսափելի ճայթիւն լսվեցաւ։ Մեծ քանակութեամբ ծուխը և ձիւնը մի քանի վայրկեան ծածկեցին ամեն բան։ Թագաւորը վայր ընկաւ։ Ինձ հետ միաժամանակ մօտ վազեց Նովիկով և ծովային զինուորները։ Մենք բարձրացրինք թագաւորին։ Երևեցաւ, որ ոտքերը բոլորովին մերկ էին, միսը կտորներով կախված էր, մի ոտքի պատուանդանը բոլորովին կտրված էր։ Այդ ժամանակ մօտ վազեց Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլայևիչ։ Ցուրտ է, ցուրտ է, ասաց թագաւորը թոյլ ձայնով։ Քննութիւնը կատարվում է 1878 թուականի մայիսի 19-ի օրէնքի համեմատ պրօկուրոր Պլևէի և 4 օգնականների ձեռքով։ Զինուորական դատարանի նիստը չարագործի մասին յետաձգված է։ Ստոյգ է որ թագաւորի սպանութիւնը կատարվեցաւ ճայթվող գնդակների օգնութեամբ։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 4 մարտի։ Այսօր ժամը 2-ին, Մալայա Սադովայա փողոցում, Մէնգդէնի տան պանրավաճառի խանութի ներքնայարկում գտնված է մի ական (լղամ), որ դուրս էր գալիս Մալայա Սադովայա փողոցի տակով։ Խանութի տէրը վարձեց այդ բնակարանը դեկտեմբեր ամսին, իսկ տեղափոխվեց յունվարին։ Երէկ երեկոյեան այդ մարդը իր կնոջ հետ անյայտացաւ, խանութի դռները բաց թողնելով. այդ դարձրեց ոստիկանութեան ուշադրութիւն։ Գտան մի ական խանութի բնակարանի մասից։ Դիվանի տակ դտնված են շաղափ, խճային քարեր և հող։ Ականահան գինուորների մի խումբին հրամայված է հետազօտել ականը։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Թամարի հեռանալուց յետոյ նա դեռ երկար մնաց իր դարանի մէջ, բարկութեամբ նայում էր Դաւթի վրա, որը այդ րոպէում անշարժ արձանի նման, սառած, ապշած կանգնել էր, բոլորովին չը կարողանալով իրան հաւատացնել, թէ տեսածը իրողութիւն էր, թէ լսածը Թամարի խօսքերն էին։ Նա շտապով վազեց օրիորդի ետևից, որ գոնէ միանգամ ևս տեսնէ նրան, բայց նա աղախինների խումբի հետ դնալով, հեռացել էր արդէն։ Այդ միջոցին թուփերի մէջ թաղնված դարանակալը գուրս եկաւ իր դաղտնարանից, և զարտուղի ճանապարհներով վազ տալով, հասաւ իր ընկերուհիներին։

Այնուհետև պատանին ամեն առաւօտ, դեռ վաղորդեան ցողը չը բարձրացած, քաղում էր լեռներից Թամարի սիրած ծաղիկները, փունջեր էր կապում, զցում էր աղբիւրների յատակ ջրերի մէջ, որ թարմ ու անթառամ մնան Թամարին ընծայելու համար։ Բայց ծաղիկները օրերով, շաբաթներով մնում էին աղբիւրների մէջ, գունատվում էին, թառամում էին, իսկ Թամարը չէր երևում։ Պատանին նորերն էր քաղում, նոր փունջեր էր կապում, բայց Թամարը չէր գալիս ու չէր գալիս նրանց տանելու համար։ Ի՞նչ էր պատահել, արդեօք հիւանդ էր նա,—պատանին ոչինչ տեղեկութիւն չունէր։ Վերջին տեսութիւնից յետոյ անցան շաբաթներ, անցան ամիսներ նա Թամարին չէր տեսել։ Նա բոլորովին կորցրեց իր սրտի ուրախութիւնը և օրըստօրէ սկսեց աւելի տխուր, աւելի լուռ ու մունջ լինել։ Պատանու տրամութիւնը, նրա անմխիթար հալումաշ լինելը չէր կարելի, որ աննկատելի մնար իր ընկերներից, որոնց բոլորի ուրախութիւնն էր նա, որոնք անդադար հարցնում էին նրա թախծութեան պատճառը, բայց ոչինչ չէին կարողանում դուրս բերել լուռ և ծածկամիտ Դաւթից։

Սիկօի իրաւասութեան ներքոյ գտնվող հովիվների թիւը, բացի Դաւթից, վեց հոգի էր։ Դաւիթը իր բնաւորութեան քաղցրութեամբ սիրելի էր դարձել ամենին։ Ոչխարների հանգստի մօտ, գիշերային խարոյկի շուրջը բոլորած, պատանին չատ անգամ զուարճացնում էր նրանց իր երգերով։ Որպէս սիւնեցի, գիտէր նա ածել թառի վրա և խիստ յաջողակ ձայն ունէր. բայց վերջին օրերում նրա ձայնը բոլորովին լռեց։

—Ի՞նչ է պատահել քեզ հետ, մի՞գիշեր հարցրեց պատանի Դէվօն, գտնելով նրան ոչխարների կայարանից հեռու, պառկած մի ժայռի մօտ։

—Ոչինչ, պատասխանեց Դաւիթը, իր տեղից չը շարժվելով,—քէֆս մի փոքր լաւ չէ. կարելի է մրսած լինեմ։

Դաւթի ընկերների մէջ Դէվօն միակն էր, որ բոլորից աւելի մտերիմ էր նրա հետ, և վերջին ժամանակներում լռութեամբ հետազօտում էր նրա դրութիւնը, թէև ընկերոջը ոչինչ չէր յայտնում։

—Ես գիտեմ, ասաց նա, խոնարհվելով իր ընկերոջ երեսի վրա,—դու ոչ հիւանդ ես և ոչ մրսած ես, բայց գիտեմ, թէ ինչու է քէֆդ վատ։

—Դու ինձանից ծածկում ես, Դաւիթ, ես կարծում էի, դու ամեն բան կասես ինձ, խօսեց Դէվօն փոքր ինչ վիրաւորված կերպով։

—Ի՞նչ բան պիտի ասեմ քեզ. դու ինքդ ասում ես, թէ ամեն բան իմանում ես։

—Հա, իմանում եմ...

—Ի՞նչ ես իմանում։

—Դու նրա համար ես տխուր, որ Թամարը էլ ոչխարների մօտ չէ գալիս։—Բայց գիտես, թէ ինչու համար չէ գալիս։

—Ես ոչինչ չը գիտեմ, թէ դու մի բան գիտես, ասա։

—Կասեմ, պատասխանեց Դէվօն բարեկամական կարեկցութեամբ և սկսեց պատմել իր հաւաքած տեղեկութիւնները։ Նա յիշեցրեց Դաւթին նրա վերջին անզգոյշ տեսութիւնը Թամարի հետ, յիշեցրեց նրանց սիրային խօսակցութիւնները, աւելացնելով, որ այդ միջոցին աղախիններից մէկը, թուփերի մէջ թաղնված լսում էր նրանց, և նա գնացել, բոլորը իմացում է տուել նրա խորթ մօրը։

Վերջին խօսքերը լսելու ժամանակ Դաւիթը բոլոր մարմնով դողաց. նրան տիրեց մի տնսակ սոսկում, կարծես, ամբողջ քարաժայռը, որի տակին պառկած էր նա, փուլ եկաւ նրա գլխին։ Նրա երկիւղը, նրա սարսափը իր մասին չէր. նա այն տեսակ երկչոտ բնաւորութիւններից չէր, որ վախենար իր յարաբերութիւնների մի իշխանաղն աղջկայ հետ յայտնվելուց, թող թէ, դա մեծ պարոնի եղբօր աղջիկը լինէր։ Շատ-շատ, կը թողնէր այդ երկիրը և կը հեռանար, իր հետ տանելով Թամարի թէ սէրը և թէ տրտմութիւնը։ Բայց նա վախենում էր նոյն իսկ Թամարի մասին, որ իր պատճառով պիտի տանջվէր, պիտի հալածվէր, անարգ նախատինքներ պիտի կրէր։

—Դրանցից ոչ մէկը չի լինի, մխիթարեց նրան բարեսիրտ Դէվօն,—դրանք կարող էին պատահել, եթէ Թամարի մայրը խորթ մայր չը լինէր։ Բայց նա բաւականացաւ միայն նրանով, որ արգելեց Թամարին տնից դուրս գալ։

—Նա կարող է յայտնել մեծ պարոնին, ասաց Դաւիթը վրդովված ձայնով։

—Նա ոչ ոքին չի յայտնի, և խստութեամբ պատուիրել է այն աղախնին, որ լուռ մնայ։

—Դու որտեղից գիտես։

—Ես գիտեմ... այն աղախինը իմ բարեկամն է.... Նա ասաց, թէ տիկինը այն ատաստան առում է Թամարին, որ գուցէ չատ ուրախ կը լինի, եթէ նա խայտառակվելու համար կը պակվի մի հովուի հետ։

—Էլ ինչու է արգելում նրան այստեղ գալ, հարցրեց Դաւիթը, փոքր ինչ հանգստանալով։

—Ո՞վ է իմանում, ինչ սատանայական մտքեր ունի, պատասխանեց Դէվօն ծիծաղելով։

—Ես նրա սատանայական մտքերը կը ոչնչացնեմ... խօսեց պատանին խորհրդաւոր ձայնով.—ես երբէք չեմ թողնի, որ Թամարը խայտառակ լինի...

(Կը շարունակուի)